

Եթէ առաջին անգամ ուսուցիչներու թերութեանց կը վերագրուէր տիրող այդ խառնակութիւնները, այսօր սակայն այլեւս ներքին չէ այդ տեսակ կարծիք մը պահել: Որովհետեւ, վերջին քանի մը ատուան մէջ նուազանչեցաւ շատ կարող ու Պուլկարիոյ մէջ քիչ շատ ճանչցուած բոլոր ուսուցիչները, և և սակայն խառնակութիւնները չի դադարեցան, դժգոհութիւնները չի վերցան ու վէճերը չի մարեցան: այլ, ընդհակառակը, կարծես օրէ օր աւելի սաստկացան մինչեւ որ, ինչպէս կը գրէ մեզի մեր թղթակիցը, այսօր այլեւս այդ վարժարանը փակուած կը մնայ, ուսուցիչներուն նիւթական անհանդուրժելի դրութեան մէջ գտնուելուն պատճառաւ:

Այս իրողութեանց հանդէպ մենք չենք վարանիր ընդունելու թէ նուազաւոր վարժարաններու ներկայ ուղբալի դրութեան ուղղակի պատասխանատուն տեղական ժողովուրդն է:

Արդարեւ, եթէ ժողովուրդը իր մատուց սերունդին շահերու գիտակցութիւնն ունենայ ու անոնցմով զեկավարուի, գործիք չի պիտի դառնայ աչգ. իշխանութեանց կամ անոնց զանազան թեկնածուներու ձեռքը, թոյլ չի պիտի տայ որ իր սերունդին դատարակութեան անկեղծօրէն նուիրուած ուսուցիչները հալածուին, անձկութեան մատնուին, յուսահատին ու լքեն իրենց քստանձնած գործը: Միւս կողմէ, թաղականութիւն կամ հոգաբարձութիւն, երբ տեսնեն թէ զիրենք ընտրող ժողովուրդը անգիտակից գործիք մը չէ, երբ իրենց վրայ զգան անոր լուրջ վերին հսկողութիւնը, չի պիտի համարձակին այդ պատկառելի գիտակցական ուժին հետ ըստ հաճոյս խաղալ, երկու մարմինները իրենց անհատական կամ խնամակարան կիրքերով զինուած չի պիտի համարձակին, գիրար վարկաբեկելու համար, ամէն ներքին ու աններքին միջոցներու դիմել, վարժարանները ամենէն խայտառակ վիճակին մատնելով առանց խղճահարութեան, մէյ մը պատրիարքարանին, մէյ մը կառավարութեան դուռը փակուելու անանց ազգային արժանապատուութեան վիրաւորանքն զգալու:

Ամօթ է այլեւս չըմբռնել ժամանակին անհրաժեշտութիւնը, և թոյլ տալ որ գոյութիւն ունենան տակաւին այդ վէճերը շարունակելու շարժանքները: Անգամ մը թող իրենց շուրջը նային նուազաւորները, ու ըսեն թէ կ'ա՞յ Պուլկարիոյ մէջ ուրիշ քաղաք մըն ալ որ դեռ սնուցա-

նէ այդ կարգի երկպառակութիւններ: Շատ աւելի կարեւոր կեդրոններու հայ վարժարանները այսօր, թէեւ նիւթակապէս նուազ ապահով քան նուազան տակաւ տակաւ շրտկուելու, կ'ունենաւորուելու, բազմացեալ վիճակը ձեռք բերելու ճիգեր է որ կ'ընեն, ամէնքը համաձայնած ձեռք ձեռք տուած: Պէտք է որ նուազաւոր այդ ուղին ձեռք առնէ: Տեղական կուսակցութիւնները կ'ընան շարունակելու, բայց կուսակից կամ հակառակորդ միաձայնօրէն պէտք է դատապարտեն ու յանդիմանն այն մարմինը, որ իր հակառակութեան թողնել վարժարանին վրայ կը թափէ, որ ուսուցիչները կը զրկէ իրենց արժանաւոր վարձատրութենէն, լոկ հակառակորդներու դէմ կիրք մը յագեցնելու համար, առանց ուսուցչին գէժ ու է դժգոհութիւն մը ունենալու: Հասարակութիւն մը պէտք է գիտնայ պատժել իր անհաւատարիմ պաշտօնեաները, եթէ չուզեր զիստօրիւ ու տուժել:

ՇԱՅԱՊ

ՆԱՄԱԿ ԼՈՒՏՈՒՆԸ

ԼՈՒՏՈՒ, 22 Մարտ 1906

Անգլիոյ շաքարակաւի նոր բարամէջները, իր բացումէն ի վեր, ծանր ու երկարատեւ վիճաբանութիւններու մէջ է: Հարցերը կատարելօրէն կը լինուին, կը քննադատուին ու կը ձեռնուին, մինչեւ որ հասնին օրինաւոր ու պատշաճ վախճանի մը:

Եթէ իւրաքանչիւր քննուած հարցի տեղեկագրութիւնը տալ ջանայի այստեղ, այն ատեն հարկ պիտի ըլլար քանի մը շարժում գրաստի թղթակցութիւններ, ինչ որ, ո՛չ խըմբարդին հաճոյք կը պատճառէ և ո՛չ ալ ընթերցողին՝ հետաքրքրութիւն: Ատոնք մեծամասնաբար ներքին հարցեր են, որոնք զուրօրինները շատ շահագրգռելու գոյն չունին, բայց եւ այնպէս, իրենց ամբողջութեան մէջ, խիստ բարձր ու լուրջ խնդիրներ կը ներկայացնեն:

Պահպանողական կառավարութեան ծուռութեամբ կատուցած չէնքին սխալները հիմնադրակ կը քարուքանդուին կոր՝ կ'առուցուելու համար նորը:

Ներկայ կառավարութեան մեծամասնութիւնը այնքան ջանջալից է, որ զիմադրի ոյժ գրեթէ չկայ եւ որոշումները կանցնին անարգել, առանց հսկայական արգելքներու:

Յայտնի է կարծեմ թէ Պէլֆոր, որ ամօթալի պարտութիւնով մը գուրս ձգուած էր բարձրմէնթէն, հիմայ կրկին մտած ըլլալով կը կատարէ լիտորձի դեր իւնիօնական կուսակցութեան, բայց ինչպիսի՞ լիտոր, ինչպիսի՞ առաջնորդ ու զլխաւոր... Առաջնորդ մը՝ որ կառավարողութիւնը իջ ոյժէ մը.—Մը. Չէմպրէյնէն:

Պէլֆոր Բարլամէնթ մտաւ հետեւեալ կերպով, որ անխուսափելի էր

Նախորդ պարտութենէն սամոկած երբ կը պատրաստուէր նոր տեղ մը քանտիտա գրուել իր պաշտօնակիցներուն միեւնոյն բաղդին դատապարտուիլը տեսնելով՝ զգաց թէ, երկրորդ համաման ճակատագրի մը պիտի արժանանար անհրաժեշտօրէն, հետեւաբար, հրաժարեցաւ: Սակայն իւնիօնականներ չէին կրնար տանիլ իրենց լիտորին գուրս ձգուելը բարլամէնթէն, հետեւաբար, բացումէն վերջ պ կիպարն Լոնտօն քաղաքի կեդրոնական մասի պահպանողական ներկայացուցիչը, որ յաղթած էր, հրաժարեցաւ իր դիրքէն և այսպէսով ազատ ասպարէզ թողուց Պէլֆորի վերջինս, նկատելով որ արդէն պահպանողական ներկայացուցիչ ընտրող վայր մը զինքը չը մերժէր, գրուեցաւ քանտիտա և այսպէսով մտաւ բարլամէնթէն: Բայց խեղճ Պէլֆոր ինչ զժբախտ պատահարներու է որ կը հանդէպի հոն... հետեւեալը կրնայ թեթեւ գաղափար մը տալ Պէլֆորի դիրքին վրայ՝ ներկայ բարլամէնթին մէջ:

Երբ անցեալները կրկին իր «ուշարար» կամ «թելադրող»-որը որ կուզէք—Չէմպրէյնին ֆիւթըը բուխի պատմութիւնները կը կարդար ժողովին, Մըր Գէմպրէ-Պէլֆորն, ա՛լ ինքզինքը զսպելու անկարող, կը ցատկէ ոտքի եւ դառնալով ներկաներուն, կը զնէ սա հարցը.— «Բարձրագատիւ պարոնը լուրջ է, կամ, ուրիշ խօսքով քաղաքավարի եղանակը սա բանձեւին թէ՛ բարձրագատիւ պարոնը արդեօք նորէն իր մասնորդ դրութեան մէջ է»:

Մը. Չէմպրէյն կը նշարէ իր գաղափարական պաշտպանեալսին ուղղուած այս արձամարտութեւնը եւ ինք եւս իր կողմէն ոտքի էլլելով՝ կը հոչակէ այդ խօսքը անբաղաքավարի ու անվայելի: Մըր Չէմպրէյն գիրարգրին մէկն է.— «Այդպիսի անբանութիւններ չեմ ուզիր, քանի որ նախարարակետ եմ ես» կ'որոտայ եւ ծափերու մէջ կը խեղդուի:

Այս է հաւ ներկայ Անգլիոյ Ազատական Բարլամէնթը:

Օտարականները հետաքրքրող եւ անոնց նպաստաւոր իրրեւ շահեկան կէտ կրնան հաղորդել հետեւեալը:

Մինչեւ այսօր անչոյտ հրատարակուած ըլլալու է մեր Բարիգէն գրած «Լոնտօնի Հայերը» վերնագրով յոգուածը, որուն վերջին մասին մէջ կը նախադուշակէինք այն կարեւորութիւնը որ օտարականներուն ազատութենէն Անգլիա մտնելու արգելման օրէնքը թերեւս չուրով խափանուի ու վերնայ մէջտեղէն: Այսօր այդ կարծիքը իրականանալու ճամբուն մէջ է: Հակառակ պահպանողական մասնաւոր խելայեղ ու շուարած թափերուն, պը. Չըբպրթ կ'ըզսթօն, Հօմ Սէքրէթէրին, մեծպէս մեղմացուցած է նախորդ անմիտ քննութիւնները: Առ այժմ իւրաքանչիւր նաւէ կարող է ընդունուիլ 20-25 հոգի միայն, պայմանաւ որ ատոնք ըլլան փախստականներ կամ այնպիսի յանցաւորներ՝ որոնք ընդհանուր բարոյականի դէմ չեն մեղանչեր Նախ եւ առաջ այսպիսի բան գոյութիւն չունէր եւ շարք մը առեսական փախստականներու ետ վերադարձուիլն կը որ, տեղի տուաւ սոյն որոշումին, զոր «ճարագործութիւն» անունով մկրտեց ազատական մասնաւոր:

Յամենայն դէպս հիմայ ա՛լ, պէտք է յայտնեմ ի դիտութիւն հայ ճամբորդներու, որ կան դեռ բաւական դժուարութիւններ: Գլխաւորագոյն կէտն է զերծ ըլլալ փոխանցական արտերէ ունենալ՝ կ'ամ վըստահելի բարեկամ երաշխաւորներ Անգլիոյ ու եւ է մօտին մէջ եւ կ'ամ 100-125 ֆրանք պատրաստի դրամ: Առաջները այս պայմանը գործադրելի էր ամենուն անխտիր, Այժմ ատկէ ազատ են Ա. կարգի տոմսակ ունեցողները, Անգլիայէ տարբեր երկրի վրայ տոմսակ կրողները, որոնք լոկ ստիպողաբար կանցնին, ինչպէս եւ անոնք, որ կերաշխաւորեն հոն չը մնալ եւ, անոնք որ կրնան ապացուցանել իրենց առաքելի ու պարկեշտ փախստականներ ըլլալը:

Ասիկա արդէն շատ էզօր քայլ մըն էր, նկատի ունենալով նամանաւանդ այն հանգամանքը՝ որ ժողովրդին մէկ խիստ մեծ ու տղէտ մասը սարսափելի օտարատեսաց մըն է եւ հարկ է խելքով եւ տրամաբանութիւնով շարժուիլ: Բայց, ինչպէս ըսինք, այդ տըխմար օրէնքին շուտով անհետացուցը կը յուսամ աւետել յետաքրքրուած ընթերցողներուն:

Մ. ՅՈՒԱԿ

Շ ԻՄԱՍԻ ԴՊՐՈՑԸ

—(օ)—

Երէկուրէ սկսեալ, քաղաքիս ազգային վարժարանը փակուած է: Ուսուցչական մարմինը՝ որ ամիսներէ ի վեր թոշակ ստացած չէր, հարկադրուեցաւ գործազուրկ ընել:


Գպրոցին արգահատելի վիճակը բարեփոխելու նպատակաւ, քաղաքիս գիտակից մասը՝ ներկայ գպրոցական տարեշրջանին սկիզբը՝ արգի հոգաբարձութիւնը ընարած էր, որմէ արգիւնաւոր գործունէութիւն կակրեկալէր: Դժգոխտաբար, իր յոյսը ի դերեւելաւ: Նոր հոգաբարձուները որոնք պաշտօնի վրայ խղճամիտ և աշխատող ուսուցչական մարմին մը գտած էին, ամենազոյզն զոհողութիւն յանձն չառին և գպրոցին փակման պատճառեղան:

Ճշմարտութեան սիրոյն՝ կը պարտիմ ըսել թէ պատասխանատուութեան յոշոր, շա՛խոշոր բաժին մըն ալ կը ծանրանայ թագ. խորհրդին վրայ, որ՝ ճղճիմ նկատումներէ թելադրուած՝ նոր Հոգաբարձութեան սանթիմ մը չէ յանձնած...:

Երբ պիտի սթափի նուազաւոր հայ համայնքը ու ե՞րբ պիտի խստապահանջ ըլլայ իր գպրոցական և եկեղեցական գործերու մասին...:

Կրթասէր

9 Մարտ 1906
Շուալա



ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԻՐ

(Շար. նախ. քիւն)

Յօդ. 55. — Մաքսատանց յարակից քիմիական աշխատանքներու պաշտօնն է.

ա) Որոշել տեսակը, որակը և մանաւանդ բաղադրութիւնը ներածուած ապրանքներուն :

բ) Ան ա լ ի զ ընել օտար երկիրներէ եկած ըմպելիքները և սննդական կամ այլ նիւթերը :

գ) Որոշել տեսակը և բաղադրութիւնը այն օտար կամ երկրին մէջ արտադրուող ապրանքներուն, որոնք աքսիզ պէտք է վճարեն, կամ որոնց համար վճարուած աքսիզը պէտք է ետ վերադարձուի, զոյնութիւն ունեցող օրէնքներու համեմատ.

Յօդ. 58. — Քիմիական աշխատանքներու և վաճառականներու միջև սպրանքներու ան ա լ ի զ ի ն հետեւեալով որոշուած տուրքերու մասին ծագող վէճերը կը կարգադրուին Երևանի նախարարութեան կողմէ կարգուած քննիչ յանձնաժողովի մը (էքսպերթ) միջոցաւ : Իսկ առողջական տեսակէտով ծագող վէճերը առողջապահական վարչութիւնը կ'որոշէ :

Յօդ. 61. — Մաքսատանց մէջ իբր յանձնակատար (քոմիսիօնէր) կրնան ըլլալ այն մարդիկը որոնք հետեւեալ պայմանները կը լրացնեն.

ա) Պոլիկարահպատակ ըլլալ և վաճառելի քաղաքային ու քաղաքական բոլոր իրաւունքները :

բ) Քառակուսի անցեալ մը չունենալ :

գ) Վարակիչ հիւանդութենէ մը բուժուած չըլլալ :

դ) Մանկացած չըլլալ :

ե) Երկրորդական կրթութիւն ան ա լ ի զ ի, գիտնալ գրել ու խօսիլ պաշտօնական լեզուն և անցուցած ըլլալ Երև. նախարարութեան գծած ծրագրով քննութիւն մը, և կամ մաքսատանց մէջ 5 տարի պաշտօնավարած ըլլալ տարեկան առ նուազն

1200 ֆր. վճարուով :
զ) Պոլիկարահպատակ և է թաղապետական շրջանակի մը մէջ արձանագրուած ըլլալուն, ինչպէս նաև պատուարու ու վատահելի մարդ ըլլալուն մասին վկայագրեր ներկայացնել :
(Շարունակելի)

ՄԻԱՄԵԱՅ ՀԱՇՈՒԵԿԻՈՒ

ՔԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ՎԱՌՆԱՅԻ

6 Մարտ 1905 — 6 Մարտ 1906

Մ Ո Ւ Տ Ք

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Մայր հաշիւ', 'Նախորդ տարեշրջանէն պատրաստ դրամ', 'Եկեղեցւոյ շրջափակին և երկաթայն գուռին շինութեան համար հանգանակութիւն', etc.

Գումար 9671.96 1/2

Ե Լ Ք

Մայր հաշիւ ՅՐ. Մնթ. 2 Եկեղեցւոյ շրջափակին և երկաթայն գուռին շինութեան 845.95

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 'Կարեւորական տուրք', 'Վարժարանին շուրջը շինուած քարայտակին և լին.', 'Պարհրգարանի ծախս', etc.

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՆ ԱԿՍՆ ԱՐԱՐԳԻՆ, ՀԵՂԻՆԱԿԱՆՔՈՒՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(«Մանգու մէթ-էֆֆեարուն» քաղաքում) Հարցուեցաւ իրեն թէ կառքը մաք.

ստուանէն հանուելէ վերջ ո՛ւր տարուեցաւ եւ դէպքին օրը ո՛րոնք կը գտնուէին տնոր մէջ, կա՛ռքը ո՛վ կը վարէր, դժոխային մեքենան պարուսակող սնտուկն ո՛վ շինեց, Ժօրիս պատասխանեց որ չի գիտեր թէ կառքը մաքսատուէն հանուելէ վերջն ո՛ւր տարուեցաւ. միայն սա գիտէ սր դէպքին օրը կասքին մէջ կը գտնուէին Լիբա Րիբս եւ Բուպինա Յայն, բայց չի գիտեր թէ ո՛վ էր կառապանը եւ ի՛նչպէս շինուեցաւ սնտուկը: Դիտել տրուեցաւ իրեն որ հարցաքննութեան պահուն ըսած էր թէ սընտուկը ի՛նք կազմած էր, հիմա ինչո՞ւ կըսէ թէ բան մը չի գիտեր այդ մասին: Ժօրիս ըսաւ թէ ամէն մարդ կրնար գիտնալ որ՝ բան մը պայթեալու համար դիմադրութեան մը կը կարօտէր, հետեւաբար երկաթ սընտուկ մը պէտք էր եւ սակայն սընտուկին գաղափարը ինք չէր յղացած: Ասոր վրայ Լիբա հարցաքննութեան թուղթին 103րդ էջին վրայ գրուած պարբերութիւն մը կարդացուեցաւ, ուր Ժօրիս կը յայտարարէր թէ սընտուկին մէջ 80 քիլօ «մէլիքիդ» կը գտնուէր:

Ժօրիս պատասխանեց թէ ինք ըսաւ որ մտաւորապէս 80 քիլօ մէլիքիդ կը գտնուէր: Հարցուեցաւ որ «մէլիքիդ» պայթեցնելու համար ո՛վ գնաց եւ ինքնիրեննուն գացին. պատասխանեց թէ գիտէ որ Լիբա Րիբս եւ Բուպինա Յայն գացին, բայց տեղեկութիւն չունի թէ ի՛նչ օրոշում տուած են. չի գիտեր նաեւ թէ անոնք երթալու վարանած են թէ ոչ: Ասոր վրայ, Ժօրիսի հարցուեցաւ թէ զանոնք տեսած էր թէ ոչ: Պատասխանեց թէ անոնք իր տունէն գացած չէին. միայն թէ դէպքին իրկուր տուն գալէ առաջ անոնց առեւը հանդիպելով տեսած էր որ իր հասցէին նամակ մը ձգած են, որուն իմաստը հարցաքննութեան միջոցին յայտնած է:

Ընդհանուր դատախազը յիշեցուց թէ ամբաստանեալը իր հարցաքննու-

ԱՊՊԵ ԺԻԼ

ՄԱՍ Բ

(Հատուածներ)

(Շար. 788 թիւէն)

Այս միջոցին, Մատէն սպասուհին, որ տեսած չէր մեր տունը դռնաւը, պարտէզին մէջ մեզի կը կանչէր վազելով:

— Արբանջար, հէ՛յ... արբանջար... — Ի՛նչ կայ, հարցուց հօրեղբայրս:

— Կը կանչեն կոր, չուտով երթաք եղբր Ս. հաղորդութիւն եւ վերջին օծում տալու... Մարդ մը եկեր խհանոցը ձեզի կըսպասէ կոր:

— Մա՛րդ մը... աղաղակեց հօրեղբայրս. վրաս կը խնդայ, Ատիկա իմ պաշտօնս է, ես ծխական քահանայս եմ միթէ:

— Մարդը անանկ ըսաւ, բացատրեց Մատէն, որ ծխական քահանան հոս չէ եղեր, Տեքսէօ հայրը հիւանդ է, իսկ միւս տեղակալը արձակուրդ առեր է: Դեռատի աղջիկ մըն է եղբր հոգեւորքը:

— Աղէկ, երթամ տեսնեմ այդ մարդը:

— Ու դուրս ելած ատեն քիթին տա-

կէն մուտար: — Հէ՛հէ՛յ... նախ որ, ես ալ հիւանդ եմ:

Անտառը կը մթնէր մութ կապոյտ ու կարմիր զանգուածներով, զոր նարնջագոյն լոյսի մը փայլուն շառաւիղները կը ծակէին: Տակաւին գիշեր չէր, բայց արդէն, վերջալուսի երկնքին սակ, խիտ մթնոլորտին մէջ դալարիքները կը գունատէին. առարկաները անորոշ երեւոյթ մը կը դազեցնուին, խուսափուկ շրջագծելով, խորհրդաւոր գաղտնիք մը մարգագետինը կը պարուրէր, որուն տրծաթագոյն կանանչութիւնը կը խանուէր փոշիից գորշին: Եւ ամբողջօրէն դեղին պատերուն վրայ պարտէզին ծառերը կերկարաձգէին իրենց ձառագէժ սիւնէթները, թռչունները լուծ էին: Ու ես տխրագին կը մտածէի թէ երիտասարդուհի մը մեռնելու վրայ է:

Հօրեղբայրս դժգոհութեամբ ներս մտաւ, ու ժող շնչելով: Ստիպուեցաւ նստիլ քանի մը վայրկեան շունչ առնելու համար: Յետոյ սկսաւ մտաւալ:

— Այս ժամու՛ն, խնդութիւն է, Ասկէ գաւ, արդէն հիւանդ եմ:

Իր կուրծքը կը շնչէր, կը հեւար վայրաշարժի մը որտու՛ններով փորը կերեւէջէր, կողերը վերարկուին տակ դատարկացած, իրենց շրջանակը

կորուսեցէին: — Վերջին օծում... մրմնաց, ես գիտե՛մ թէ ինչպէս կուտան... ինձի նայէ պղտիկ:

— Այո, հօրեղբայր, — Ինձի հետ պիտի դաս տիրացու թիւն պիտի ընես. Յոնէօթ. . գացած ես այս գիւղը:

— Այո, հօրեղբայր, — Ճիշդ մէկ մղոն հեռաւորութիւն ունի:

— Այո, հօրեղբայր, — Մէկ մղոն... ինչպէ՛ս մինչև հիւ հոն պիտի երթամ... Ո՛ր է մաշտոցս:

Երկաթօրէն մաշտոցը վնտոնի հարկ եղաւ, զոր գտան գարանի մը մէկ անկիւնը նետուած, հին, ժանգոտած գամբուռ եւ ճրագի ծայրերու հետ: Ու երբ վերջին օծման ծէսերուն վերջանէ կանցնէր, սկսաւ մտաւալ:

— Իսկ քահանան, ո՛վ գիտէ ո՛ր ծուխին տունը ճաշկերոյթի գացած է... ատ ման ու ս, ատ բ է տ է ս... իսկ եթէ փոխանակ այս բառերուն աւ լու է մ պ ու ս ըսեմ, խեղճ աղջկան համար ի՛նչ տարբերութիւն պիտի ընեն: Հոգեւարքնե՛րն ալ հանպիստ չի պիտի թողուք որ մեռնին:

Արբան փակեց իր մաշտոցը, զայն վերարկուին գրպանը դրաւ եւ երթեց, ըսաւ:

Իբրև ատեն շարունակ կը կրկնէր — ատ բ է տ է ս — ատ ման ու ս մէկ մղոն, ո՛հ, պիտի խեղդուիմ:

Տմոյն լոյս մը որ չի ճառագայթեր, դիշերային երկնքին դալկացած լոյսը, լայն ապակիներէն ներս կը մտնէր և եկեղեցւոյն թեւերուն մէջ սիրող խաւարը իր կակածելի ու ագահ փայլունութեամբ կը փարատէր: Մեր քայլերը կը հնչէին քարայտակին վրայ ու անոնց աղմուկը զէպի կամարները կը բարձրանար ու կը կորսուէր, ուր սիւններ, անորոշ կամարներ, չի սպիտակութիւններ կը յայտնուէին անորոշ, ստուեր ստուերի մէջ անցած:

Ժամկոչը որուն իմաց տրուած էր, մեզի կըսպասէր սրբատունը, Մոմբրու մնացորդներ, որոնք դեղնագոյն պղնձէ բարձր աշտանակներու մէջ կը վառէին, մահաբեմի լոյսով մը կը լուսաւորէին սեւ ու սպիտակ քառակուսի քարերով յատակուած այս մասը: Հալած մեղրամոմի կծու հոտ մը խուսկի հոտին խառնուելով մեր կողորդը թխմեց:

— Անապարենք, ըսաւ հօրեղբայրս ժամկոչին, որ յարգանք խոնարհութիւն մը ըրաւ:

(Շարունակելի)

թեան միջոցին ըսած էր որ «Դուք եթէ չերթաք ես կերթամ», եւ այս կերպով քաջաբերած էր զանոնք ուստի պահանջեց որ այս կէտը հարցուի ժողովի:

Ժորիս պատասխանեց թէ ինք հարցաքննութեան միջոցին այդպէս չէ ըսած. այլ թէ «եթէ անոնք չերթային, ես կերթայի» ըսած է եւ թէ ինք չէ քաջաբերած զանոնք: Հարցուեցաւ նաեւ թէ ո՞վ է Սամուէլ Ֆայն, իր տունը ո՞րչափ ժամանակ բնակած է, եւ այդ միջոցին ի՞նչ կարգի գործեր գործած են: Ժորիս պատասխանեց թէ Սամուէլ Ֆայն հայ քոմիտէին անդամ էր, իր տանը մէջ երկու սենեակ վարձած էր, ուր կը նստէր ուզած մարդիկը, որոնց հետ ինքը չէր տեսնուեր սակայն. հետեւարար չի գիտեր թէ անոնց մէջ ի՞նչ տեսակ խօսքեր անցած դարձած էին, եւ չը յիշեր թէ իր հարցաքննութեան միջոցին այս խնդրին վրայ բան մը ըսած ըլլայ: Ժորիս յարեց թէ իր կարծիքով Սամուէլ Ֆայն քոմիտէին պետերէն ըլլալու էր, թէ Դ ր օ շ ա կ իրազրին խմբագիրն էր, եւ Բ ր օ Ա ր մ է ն ի ա իրազրին մէջ հըրատարակած մէկ յօդուածէն հասկցած էր թէ անոր անունն է Խրիստոֆոր Սթրայտլան: «Պոստա» նստեալու եւ «մէլիւնիդ» պայթեցնելու մեքենան գործածելու մասին Սամուէլ Ֆայնի տառապանքներուն ժողովի ինք ալ կարծիք յայտնած ըլլալով, հարցուեցաւ իրեն թէ ի՞նչ ըսած է այս նկատմամբ: Ժորիս պատասխանեց թէ երբ Վառձապուրէ ֆէնտրիքանի հետ խորհրդակցութիւն կը կատարուէր որ պարթիւնին համար ի՞նչ միջոց պիտի գործածուի, ինք ալ ըսած է թէ լաւագոյն է պ օ մ պ ա գործածել: Հարցուեցաւ իրեն թէ քոմիտէները քանի՞ տեսակ են, ո՞ւր կը գտնուին եւ որոնք են անոնց անդամները: Ըսու թէ ատոնց նկատմամբ ունեցած տեղեկութիւնները թերթերու մէջ կարգացածներն են միայն, եւ թէ Եւրոպայի մէկ քանի կողմերը թէեւ քօմիտէներ կան, բայց իր անուան չեղած նամակները կարողալու սովորութիւն չունենալով, չը գիտեր թէ որոնք կ'անդամակցին այդ քոմիտէներուն:

Ժամանակը ուշ ըլլալով հարցաքննութիւններուն եւ դատարարութեան շարունակութիւնը յետաձգուեցաւ:

Ա.Ո.Ս.Ի.Ն. ԴԱՏԱՎՈՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

«Բիւզլիչէր Բրէսպին Պօլսէն կիմացնեն. ժամանակէ մը իվեր Սուլթանը հիւանդ է: Այս իսկ պատճառով արքունիքի մէջ անհանգստութիւն կը տիրապետէ: — Սելանիկէն կիմացնեն. Հիւմի րաչային առած տեղեկութիւններու համաձայն, Մակեդոնիոյ մէջ գտնուած պոլկար հրոսակախմբերը այս տարի Մառզէրեան հրացաններով զինուած են, համանման այն տիպին որ թրքական բանակին մէջ կը գործածուի եւ կը կրէ ը. տ. 1313 րգ. տարուան թիւը: — Հակառակ Անգլիոյ տուած

կրկնած խոստումներուն, տաճ կական կառավարութիւնը, սահմանագիծ յանձնարարէն ստացած տեղեկագրի մը վրայ հիմնուելով կը պնդէ թէ՛ բոլոր թրքապարսկական վիճելի հողարածինը եւ Սաթիճանի երկիրը Խուրքիոյ կը պատկանին: Պարսկական կառավարութիւնը պատերազմի պատճառով թիւններ կը տեսնէ, եւ զօրք կը զրկէ զէպի սահմանագլուխ Թէեւ պարսիկ բանակը, բառին լայն առումով սչնչութիւն մը կը կազմէ, այսու պարսկական կառավարութիւնը կը յուսայ թէ շիրիմները, հովկասցի հայերը, վաչկատուն ցեղերը մեծապէս պիտի օգնեն իրեն, ինչպէս որ միշտ օգնած են յետս մղելու համար երբեմնի թրքական յարձակումները: Պօլսոյ մէջ շատ անհանգստութիւն ցոյց կուտան իրաց այս կացութեան հանդէպ: Ինչ որ կրնայ շատ մը կնճռոտութիւններու տեղի տալ:

— Թեղաւթաձիգ զօրաց վերատեսուչ, Ջէքի բաշան, որուն յանձնարարուած էր թրքական բանակին մէջ մասը շուսափոխութեան քաղաքական գրութեան վերածել, իր գործը աւարտած է: Ջէքի բաշան կը հաւատէ թէ՛ առաջին զօրակոչումին կարելի է 350 հազար հոգի համախմբել, ի զէպ պարագային, զինուորական իշխանութեանց տրամադրութեան տակ հարկ եղած քանակութեամբ վազօս դնելու համար, Արեւելեան երկաթուղիներու ընկերութեան հրաման է ստուած, որ հարկ եղած տնօրէնութիւնը այժմէն իսկ ընէ:

— «Քալէր» հեռագրական գործակալութեան Պօլսէն քաջուած հեռագիր մը կը հաստատէ այն լուրը, թէ Խուրքիոյ եւ Եգիպտական կառավարութեան միջեւ յարաբերութիւնները լարուած են: Հիմակուան խտրիվն 1892 ին եգիպտական իշխանութեան պետ անուանուած ժամանակ, Եգիպտոսին անոր քաջած մէկ հեռագրին վրայ հիմնուելով Բ. Դուռը կը յայտարարէ թէ՛ Թապան կայսերական երկրաբանի անբաժան մէկ մասն է, եւ Ահապայի նահանգին մէջ կիրյայ Պօլսէն առնուած այլ եւ այլ վկայութիւններու նայելով, թրքական զինուորական իշխանութիւնները Սինայեան թերակղզւոյ սահմանագիծի երկայնութեամբ թղթատարական պաշտօնատներ կը հաստատեն:

— Պօլսոյ քաղաքապետ Բատվան բաշան իր ամառանոցը երթալու միջոցին կէօզ Թէփիկի կայարանին մօտերը սպաննուած է հինգ շարագոբներէ, որոնք յանկարծ յարձակելով վեցհարուած հաններով ոճիրը կը գործադրեն, կը կարծուի թէ Բատ

վան բայայի սպանիչները երեւելի քիւրտ ընտանիքէ երկու հզարայններ են, որոնց մին Նըլտրքի մէջ պաշտօնեայ է, միւսը զինուորական հրամանատար այս երկու հզարայնները Բատվան բայայի հետ միշտ հակառակութիւններ ունեցած են:

Թ Ո Ւ Ս Ի Ա

Բեթերսպուրկէն «էչանձ թէլէկրաֆ»-ին կը հաղորդեն. կառավարական շրջանակներու մէջ ծագելիք պատմաբանութեան մը մասին շատ մեծ վախ կը տիրէ: Ու է պատահականութեան առաջը առնելու համար, Սարսքօթ Թէլօի արքունեաց պահակազօրը զօրացնելու համար գունդ մը քողաք զինուորներ զրկուած է:

— «Սլօզ» լրագիրը կը հաւատէ թէ՛ Վիթէն պիտի տայ իր հրամարականը Անոր անգը, նախկին ելիմտից նախարար Գոզովչէվը նշանակուելու է:

— Բեթերսպուրկէն հասած լուրերու համաձայն, յեղափոխական կուսակցութիւնները մեծ գործունէութեան մէջ են: Ապրիլ ամսոյ սկզբները Ֆիլիւստիոյ մէջ, յեղափոխական կուսակցութիւններու մեծ համայնաժողով մը պիտի ըլլայ: Ծառ հաւանական է որ այս համաժողովին մէջ որոշեն ընդհանուր գործադուլ, կոստատարագիւնա Տուսի համար ընդհանուր ընտրողականութեան իրաւունք ձեռք ձգելու համար, կառավարութիւնը, զլուխ ունենալով ներքին գործոց նախարարը, վախճալով որ չըլլայ թէ անցեալ տարուան զէպքերը դարձեալ կրկնուին, հիմակուան հրաման առած է բոլոր կուսակալներուն որպէսզի ձեռք առնեն ամենախիստ միջոցներ արգիլելու համար կայանալիք համաժողովը:

— Լոտի մօտ, Բատեանցի մէջ, Գինտլէրի գործարանի գործաւորներէն 34 հոգի, որ մերժած էին գործադուլ ընել թունաւորուած են: Անոնցմէ մէկը արգէն մեռած է, 10 հոգի օրհասական վիճակի մէջ կը գտնուին, մնացածներու կեանքն ալ վտանգի մէջ է:

— Բեթերսպուրկէն կը ծանուցանեն թէ՛ Արտաքին գործոց նախարար Լամստօրֆը քիչ օրէն տալու է իր հրաժարականը. քաղաքական շրջանակներու մէջ լուր կը շրջի թէ Լամստօրֆ Ռուսիոյ արտաքին քաղաքականութիւնը իր համարակութեամբ բոլորովին վտանգած է, այս իսկ պատճառով պաշտօնանկ պիտի ըլլայ եւ զայն պիտի փոխանակէ Բարիզի դեսպան Նելիտովը:

— Տուսի պատուիրակներու ընտրութեան հետեւանօք, քանի

մը նահանգներու մէջ գիւղական ապստամբութիւններ ծագած եւ անկարգութիւններ տեղի ունեցած են:

Կառավարութիւնը անմիջապէս ձեռք առած է ամենախիստ միջոցներ կարգը եւ խաղաղութիւնը պահպանելու համար:

ՖՐԱՆՍԱ

Հետզհետէ գործադուլը կը նուազի, հիւսիսային հանգերու եւ Բատլ—Բալէի մէջ արգէն գործի սկսած են:

— Երեսփոխանական ընտրութիւնները յառաջիկայ ապրիլ 6 ու 20 ին պիտի ըլլան:

ՄԱՐՈՒՔ

«էգօ տը Բարի» լրագիրը կառավարական պատուիրակներու համաձայնութեամբ մասին հետեւեալ քաղաքատրութիւնը կուտայ եւ անոր ճշտութիւնը կերտալաւորէ: Կառավարական պանդի մասին, Ֆրանսան «Դոնտրոգիլու» մէջ երեք բաժին պիտի ունենայ. իսկ Գերմանիան վերոյիշեալ պանդի կառավարութեան մէջ ինչ ինչ իրաւունք պիտի վսյելէ: Դանձէր եւ Մակաոն նաւահանգիստներու մէջ ոստիկանութիւնը խառն պիտի ըլլայ, իսկ մնացած վեց նաւահանգիստները Ֆրանսայի եւ Սպանիոյ միջեւ բաժանուելու է: Ոստիկանական սպաները հարիւրապետի աստիճան ունենալու են, քննիչ պիտի կարգուի Աւստրիական բանակէն փոխ հրապարակետ մը. նա պարտաւորուած է ամէն ամիս իր պաշտօնէութեան մասին Ուլլմանի եւ Դանձէրի քաղաքական մարմինն, որ կը կազմէ միջազգային յանձնախումբը, մանրամասն տեղեկագիր ներկայացնելու Ֆրանսայի եւ Սպանիոյ պատուիրագրութիւն տրուած է 5 տարուան ժամանակամիջոցի համար:

«էքս տը Բարի» լրագրի թղթակիցը կը հաւատէ թէ՛ Անգլիան եւ Ռուսիան ոստիկանական հարցի մասին Ֆրանսայի ոյժ տուած են: —

Պանգի հարցի մասին Ֆրանսայի ոյժ տուած է Իսալիտն:

Մ Ո Ւ Ր Ճ

Ա մ ս ա գ ի ր
Գրական, Հասարակական եւ
Քաղաքական
Ի մ ժ ն ե գ ի ն ը
Արտասահմանի համար տարեկան
12 րուպի վեցամսեայ 7 րուպի
Հասցէ՝ Բէ տ ա ք ս ի Օ ն տ ը Լ ա
ր ը վ ի Վ Ո Ւ Ր Ճ
(Կովկաս) Թիֆլիզ